ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

*375010, Երևան-10, Նալբանդյան 28*
*Հեռ. 59-01-44 Ֆաքս (374 10) 59-00-77*
*Էլ. փոստ inspection@mtc.am*

N 24-01/05-2140

< 22 > 06 2015թ.

*Քաղ. Արեգ Ալեքսանի Ալեքսանյանին*

*հասցեն՝ ՀՀ. Լոռի, Ստեփանավան,*

*Բաղրամյան փ., տ.54*

ՀՀ տրանսպորտային տեսչության կողմից 2015 թվականի հունիսի 1-ին կատարված վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում արձանագրվել է, որ Ձեզ պատկանող տրանսպորտային միջոցով («Օպել» մակնիշի 34VT259h/h) խախտվել է <Ավտոմոբիլային տրանսպորտի մասին> > ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջները, որի հիման վրա կազմվել է վերահսկողության արդյունքների ամփոփման թվով 1 արձանագրություն (SSN023916):

Ձեզ է ուղարկվում ՀՀ տրանսպորտային տեսչության պետի կողմից վարչական տույժ նշանակելու վերաբերյալ կայացրած որոշման երկրորդ օրինակը և առաջարկվում է 15-օրյա ժամկետում <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի $137^{2}$-րդ հոդվածով նախատեսված տույժը վճարել պետական բյուջե՝ ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի հաշվեհամարին (900005240420) (նշելով արձանագրության համարը), հակառակ դեպքում ՀՀ օրենդրությամբ սահմանված կարգով կձեռնարկվեն համապատասխան միջոցներ:

Առդիր՝ որոշման օրինակը 1 թերթից:

*Պետ՝* Ա. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

*Կատ. Ա. Մանվելյան հեռ. 59-01-72*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 023916-1

**վարչական պատասխանատվության ենթարկելու մասին**

<19> -- 06----- 2015թ. ք. Երևան

Ես, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչության պետ Ա. Միրիջանյանս քննելով

---------------------------- **Արեգ Ալեքսանի Ալեքսանյանի**----------------------------

նկատմամբ 2015 թվականի -06- <01>-ին կազմված վերահսկողության արդյունքների ամփոփման թիվ -**023916**արձանագրությունը և վարչական վարույթի վերաբերյալ այլ նյութերը

**ՊԱՐԶԵՑԻ**

որ, **Արեգ Ալեքսանի Ալեքսանյանին պատկանող <Օպել>** մակնիշի **34VT259** հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցով 01.06.2015թ.-ին Խանջյան փող, Վերնիսաժի հարակից տարածքում, ժամը 11.33-ին, իրականացվել է տաքսամոտորային փոխադրում առանց փոխադրումների կազմակերպման լիցենզիայի:

(գործի քննության ընթացքում պարզված հանգամանքները)

----------- **Այսինքն՝ Արեգ Ալեքսանի Ալեքսանյանը**----------------------------------------

(վարչական պատասխանատվության ենթարկվող անձի անունը, ազգանունը, հայրանունը կամ իրավաբանական անձի անվանումը)

խախտել է <Ավտոմոբիլային տրանսպորտի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի -**17**-րդ հոդվածի -**1**- -ին մասի պահանջները՝ կատ.արելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի -**$137^{2}$**- -րդ հոդվածի **7**-րդ պարբերությունով նախատեսված իրավախախտումը:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 244.13-րդ հոդվածի պահանջներով

**ՈՐՈՇԵՑԻ**

**Արեգ Ալեքսանի Ալեքսանյանին** /ծնվ.՝ 22/09/1991թ/ ՀՀ, Լոռի, Ստեփանավան, Բաղրամյան փ., տ.54.

(վարչական պատասխանատվության ենթարկվող անձի անունը, ազգանունը, հայրանունը,հասցեն, ծննդյան տարին, ամիս,ամսաթիվը, անձնագրի տվյալները կամ իրավաբանական անձի անվանումը, գրանցման համարը, գտնվելու վայրը)

ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տույժ - **50.000** դրամ-:

Ծանոթություն.

Սույն որոշումը կարող է բողոքարկվել որոշումն ընդունելու օրվանից տասն օրվա ընթացքում:

Տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

Գումարը անհրաժեշտ է վճարել ՀՀ պետական բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005240420 հաշվեհամարին:

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ա.ՄԻՐԻՋԱՆՅԱՆ